Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

(համաձայն հերթական համալիր ստուգման արդյունքների)

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 23.09.2011թ թիվ 22 արձանագրությամբ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների 7.6-րդ և 8.2.7-րդ կետերի RL 1-002 կանոնների 23-րդ և RL 1-003 կանոնների 29.2-րդ կետերի, RL 1-005 կանոնների 1-ին կետի 1-ին ենթակետի, RL 1-017 կանոնների 4-րդ և 5-րդ կետերի, RL 1-020 կանոնների 8-րդ կետի, RL 1-022 կանոնների 4-րդ կետի, Բյուրոյի կանոնադրության 29-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի և 32-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 13.08.2010թ-ի թիվ 203-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով: Ընկերությանը տրվել է հանձնարարական 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել RL 1-003 կանոնների 29.2-րդ և RL 1-022 կանոնների 4-րդ կետերի խախտումները:

RL 1-001 կանոնների 8.3.1-րդ կետի, RL 1-002 կանոնների 14-րդ և 25-րդ, RL 1-013 կանոնների 6-րդ և RL 1-017 կանոնների 5-րդ և 10-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նկատմամբ կիրառվել է 250.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-002 կանոնների 15-րդ և RL 1-010 կանոնների 1-ին կետերի խախտման համար Ընկերությանը նկատմամբ կիրառվել է 150.000 ՀՀ դրամի չափով տուգանք: Ընկերությանը տրվել է հանձնարարական մեկ ամսվա ընթացքում վերացնել RL 1-002 կանոնների 15-րդ կետի խախտումը՝ խախտումը վերացնելու վերաբերյալ համապատասխան գրություն ներկայացնելով Բյուրո:

RL 1-009 կանոնների 2.1-րդ կետի, 3-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների, 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունների և 6-րդ ենթակետի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 400.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-003 կանոնների 43-րդ, RL 1-013 կանոնների 82-րդ և RL 1-017 կանոնների 22-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել ՝ 300.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով: Ընկերությանը տրվել է հանձնարարական 7 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել RL 1-013 կանոնների 82-րդ կետի խախտումը՝ խախտումը վերացնելու վերաբերյալ համապատասխան գրություն ներկայացնելով Բյուրո:

RL 1-003 կանոնների 29.3-րդ, RL 1-011 կանոնների 2-րդ, RL 1-023 կանոնների 3-րդ և RL 1-027 կանոնների 12-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառվել է 250.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ Ընկերությանը հանձնարարելով 15 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել նկարագրված խախտումները և խախտումները վերացնելու վերաբերյալ համապատասխան գրություն ներկայացնել Բյուրո:

RL 1-001 կանոնների 8.3.1-րդ, RL 1-017 կանոնների 5-րդ և 12-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նկատմամբ կիրառվել է 300.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

RL 1-001 կանոնների 8.4.1-րդ և RL 1-017 կանոնների 5-րդ, 10-րդ և 13-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նկատմամբ կիրառվել է 525.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

Որոշմամբ սահմանված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 2.175.000 ՀՀ դրամ: